ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀՍՄԱ-ԳՀԾՁԲ-2026/2» գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Կապան

23 փետրվար 2026թ
ժամը՝ 16:30

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝ Բալյան Կարեն - ՀՀ Սյունիքի մարզպետի խորհրդական

հանձնաժողովի անդամներ՝

Արզումանյան Արթուր - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

Առուստամյան Ռոբերտ - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

Հայրապետյան Իվետա - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

հանձնաժողովի քարտուղար՝ Գրիգորյան Սահականուշ (գնումների համակարգող)

1. Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հայտարարության և հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 16:30-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

2. ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀՍՄԱ-ԳՀԾՁԲ-2026/2» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Հ/Հ	Մասնակցի անվանում	ՀՎՀՀ	Հասցե	Էլ. փոստի հասցե
1	«Ջի էմ Բի Գրուպ»ՍՊԸ	03306213	ՀՀ Կոտայքի մարզ, ք. Եղվարդ, Չարենցի 87	jmbgroup@mail.ru
2	«ԻՆՖՐԱ ԴԻԶԱՅՆ»ՍՊԸ	00490182	ք. Երևան, Ռուբինյանց փ. /շենք 2/3, բն. 50	infradesign@mail.ru
3	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	08417251	ՀՀ, ք. Երևան, Ավան, Սայաթ-Նովա թող. 8	info@haldi.am
4	«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ	09809552	ք. Երևան, Թումանյան 32/4	armstroyproject@gmail.com

3. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են բոլոր փաստաթղթերը և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ.

- «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի հայտում բացակայում է աշխատանքային ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվությունը (մասնագետների հավաստագիր, դիպլոմ, համաձայնություն, հավելված 1,3),
- «ԻՆՖՐԱ ԴԻԶԱՅՆ»ՍՊԸ հայտում բացակայում է աշխատանքային ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվությունը (մասնագետների հավաստագիր, դիպլոմ, համաձայնություն, հավելված 1,3)

4. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները.

№№	Մասնակից	Նախահաշվային գին	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
Չափաբաժին 1՝ Սյունիքի մարզի Կապան համայնքի Սյունիք բնակավայրի Սյունիքի միջնակարգ դպրոց տանող 0,22 կմ ճանապարհի ասֆալտապատման աշխատանքների նախագծի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություն					
1	**«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ**	**1300000**	**560000**	**112000**	**672000**
2	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ		575000	115000	690000
3	«Ջի էմ Բի Գրուպ»ՍՊԸ		900000	0	900000
4	«ԻՆՖՐԱ ԴԻԶԱՅՆ»ՍՊԸ		1120000	0	1120000
Չափաբաժին 2՝ Սյունիքի մարզի Տաթև համայնքի Հարժիս բնակավայրի Հ. Մինասյանի անվան միջնակարգ դպրոց տանող 0,4կմ ճանապարհի ասֆալտապատման աշխատանքների նախագծի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություն					
1	**«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ**	**2500000**	**937500**	**187500**	**1125000**
2	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ		1250000	250000	1500000
3	«Ջի էմ Բի Գրուպ»ՍՊԸ		1600000	0	1600000
4	«ԻՆՖՐԱ ԴԻԶԱՅՆ»ՍՊԸ		2120000	0	2120000

5. Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից:

6. Հրավերի վերաբերյալ հարցեր և պարզաբանումներ չեն եղել:

7. Մասնակիցներին հայտնաբերված անհամապատասխանությունների շտկման հնարավորություն տալու նպատակով, գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի բացման և գնահատման նիստը կասեցնել 1 (մեկ) աշխատանքային օրով և այդ մասին ծանուցել մասնակիցներին՝ շտկելու անհամապատասխանությունները և ներկայացնել բացակա փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 , դեմ՝0

Հայտերի բացման և գնահատման նիստը շարունակվել է մարտի 02-ին ժամը 16:30-ին ք. Կապան, Գ. Նժդեհի 1 հասցեում, որին մասնակցում էին՝

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝ Բալյան Կարեն - ՀՀ Սյունիքի մարզպետի խորհրդական

հանձնաժողովի անդամներ՝

Արզումանյան Արթուր - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

Առուստամյան Ռոբերտ - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

Հայրապետյան Իվետա - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

հանձնաժողովի քարտուղար՝ Գրիգորյան Սահականուշ (գնումների համակարգող)

8. «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ն և «ԻՆՖՐԱ ԴԻԶԱՅՆ»ՍՊԸ-ն սահմանված ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով, գնահատող հանձնաժողովին են ներկայացրել պահանջված տեղեկատվությունը:

9. Հայտերը գնահատվել են «ՀՀՍՄԱ-ԳՀԾՁԲ-2026/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով: Մասնակիցների ներկայացրած հայտերը համապատասխանում են հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին և գնահատվել են «**Բավարար**»:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝0

10. **Գնահատող հանձնաժողովը որոշեց**, հիմք ընդունելով գնահատման արդյուքները, ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, **№ 1 և № 2 ընտրված մասնակից ճանաչել «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ -ին:**

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝0

11. Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Կարեն Բալյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Արթուր Արզումանյան

_____ Ռոբերտ Առուստամյան

_____ Իվետա Հայրապետյան

հանձնաժողովի քարտուղար՝ _____ Սահականուշ Գրիգորյան